


**ՄԻՏՔԻ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԻՒՆ
ԽՆԴՐԵԼՈՒ ԱՂՕԹԸ**

Շնորհակալութի՛ւն քեզի, ո՛վ Աստուած՝ մեր տէրը, որ քու տեսանելի յոյսովդ ուրախացուցիր մեզ՝ քու բոլոր արարածներդ, իսկ քու պատուիրաններդ հոգեւոր յոյսովը լուսաւորեցիր քեզի հաւատացողները: Մե՛զ ալ գորացուր, Տէ՛ր, որպէսզի կարենանք քու պատուիրաններդ պահել այսօր եւ ամէն առեւտրեմ, որպէսզի լուսաւորուած միտքով՝ միշտ քու կամքդ կատարենք եւ քու պարաստած բարիքներդ հասնինք բոլոր սուրբերդ հետ միասին, մեր Տիրոջ եւ Փրկչին՝ Յիսուս Քրիստոսի պարգեւած շնորհքովն ու մարդասիրութեամբը: Անո՛ր կը վայելեն փառքը, իշխանութիւնն ու պատիւը, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

Դո՛ւն ես մեր խաղաղութիւնն ու կեանքը, ո՛վ Միածին Որդի Աստուծոյ, մեր Տէրն ու փրկիչը՝ Յիսուս Քրիստոս: Տո՛ւր մեզի քու խաղաղութիւնդ, որ սուրբ առաքելներդ շնորհեցիր՝ անոնց վրայ փչելով կենդանացնող եւ ամենագոր քու Սուրբ Հոգիդ: Որպէսզի մե՛նք ալ աշխարհէն եկող ամէն տեսակի փորձութիւններէն խաղաղած՝ տաճար եւ բնակարան դառնանք աստուածային շնորհքներդ, եւ շնորհակալութեամբ փառաւորենք քեզ՝ ո՛վ Քրիստոս, մեր Աստուածը, Հօրը եւ Սուրբ Հոգիդ հետ միասին. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն



ԵԿԵՂԵՑԻՆ

Եկեղեցին Ընդհանրական է, կը պատկանի բոլորին: Ոչ որ իրաւունք ունի զայն սեփականացնելու, եւ ոչ մէկ եկեղեցի գերակայութեան նկրտումներով իրաւունք ունի ինքզինք գերադաս նկատելու: Այլ հասկացողութեամբ ուղղափառ դաւանութեան ենթահողին վրայ կառուցուած եկեղեցին, Քրիստոսով մարմնաւորուած եւ հաւատացեալներու աղօթքով իմաստաւորուած հոգեւոր տունն է բոլոր ուղղափառ դաւանութեամբ քրիստոնէայ անունը իրենց ճակատին կրող հաւատացեալներուն:

Մարդիկ կրնան տարբեր լեզուներով աղօթել, կրնան տարբեր ծիսակատարութեամբ զԱստուած փառաբանել, կրնան ազգային տարազաւորումով տալ իրենց հաւատքը, բայց այնքան ատեն, որ կը մնան ուղղափառ հաւատքին մէջ խարսխաւորուած, կը պահեն իրենց ընդհանրական բնոյթ ու նկարագիրը, կը մնան հաւատարիմ Հաւատոյ Հանգանակի Ընդհանրական պատգամին:

Շարունակելի

ՀԱՍՅԷ.

ՃՐԱԳ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՈՒԱԶՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud, P.O.Box 80810 -Tel/Fax:01-258300- [facebook-ի էջ](#) [jcrak](#) [Միաց քերք](#)



ԺԴ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 20 ՅՈՒՆԻՍ 2021

ԹԻԻ 25

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ՍԱՏՈՒԱԾԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Ես.1.21-31: Հռ. 7.25-8.11

ՅԻՍՈՒՍ ԹՐԻՍՏՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՍԱՏԹԷՈՍԻ 12.28-45

ԱԲԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՍԱՏԹԷՈՍԻ 12.28-45

Այն առեւտրեմ օրէնքի ուսուցիչներն եւ փարիսեցիներն ոմանք ըսին Յիսուսի. *«Վարդապետ, կ'ուզենք, որ հրաշք մը գործես»:*

Յիսուս անոնց պատասխանեց. *«Աստուծոյ անհաւատարիմ չա՛ր սերունդ. նշան մը կ'ուզէք. բայց Յովնան մարգարէին պատահած հրաշքէն զատ ուրիշ նշան պիտի չտեսնէք: Եւ ինչպէս Յովնան երեք օր ցերեկ ու գիշեր կէտ ձուկին փորին մէջ անցուց, նոյնպէս ալ մարդու Որդին երեք օր ցերեկ ու գիշեր պիտի մնայ երկրի ընդերքին մէջ: Դատաստանի օրը Նիմուէցիները ձեզի դէմ պիտի ելլեն եւ դատապարտեն ձեզ, որովհետեւ անոնք Յովնանի քարոզութեամբ զղջացին իրենց մեղքերուն համար: Եւ ահա, Յովնանէն աւելի մեծ մէկը կայ հոս: Դարձեալ, Դատաստանի օրը հարաւի թագուհին պիտի ելլէ եւ դատապարտէ ձեզ, որովհետեւ ան իր հեռաւոր երկրէն եկաւ Սողոմոնի իմաստուն ուսուցումները լսելու համար: Եւ ահա, Սողոմոնէն աւելի մեծ մէկը կայ հոս:*

«Երբ չար ոգի մը դուրս կ'ելլէ մարդու մը մէջէն, կ'երթայ եւ անջորդի վայրեր կը շրջի՝ հանգիստ տեղ մը գտնելու համար: Եւ երբ չգտնէ, ինքնիրեն կ'ըսէ. "Ելլեմ երթամ իմ տունս, ուրկէ ելայ": Ուստի կը վերադառնայ իր նախկին տունը եւ զայն կը գտնէ պարսպ, մաքուր եւ յարդուած: Ապա կ'երթայ եւ կը բերէ իրմէ աւելի չար եօթը ալ ոգիներ, որոնց հետ ներս մտնելով՝ կը բնակի հոն, որով այդ մարդուն վերջը իր նախկին վիճակէն շատ աւելի գէշ կ'ըլլայ: Գիտցէք, որ նոյնը պիտի պատահի նաեւ այս չար սերունդին»:

ԽՐԱՏ՝ ԲՈԼՈՐ ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐՈՒՆ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՐԶՆԿԱՑԻԻ ՀԱԽԱՏՔԻ ՄԱՍԻՆ

Հաւատքը մարդուն սրտին մէջ արմատացած տունկ է, որուն արմատը՝ Հայրն է, արմատին վրայ գտնուող ոստը՝ Որդին է, տունկին եւ ոստին վրայի անթառամ ծաղիկը՝ Ս. Հոգին, իսկ քաղցրահամ պտուղը՝ բոլոր բարի գործերն են, որովհետեւ պտուղը արմատէն, ոստէն եւ ծաղիկէն կը յառաջանայ, ինչպէս բարի գործերը՝ հաւատէն: Ինչպէս, որ ծառը առանց պտուղի գեղեցիկ չերեւիր եւ առանց ծառի պտուղ չըլլար, նոյնպէս հաւատքը առանց գործի վայելուչ չէ, ոչ ալ գործերը՝ առանց նշմարիտ եւ ուղիղ հաւատքի:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ԳԻՏ ՆՇԵԱՐԱՅ ՍՐՔՈՅ ՀՕՐՆ ՄԵՐՈՅ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ

Ս. Գրիգոր Լուսավորիչ, լման քառորդ դար մեծ արդիւնաւորութեամբ կառավարել է ամրացնել ետք Հայոց եկեղեցին, փոխադրուեցաւ առ Աստուած 326-ին՝ իր առանձնացումի շրջաններէն մէկուն ընթացքին եւ ոչ ոք լուր ունեցաւ իր մահէն: Հովիւներ՝ գտնելով անոր մարմինը, թաղեցին զայն առանց գիտնալու, թէ որո՞ւն մարմինն էր: Տարիներ յետոյ յայտնուեցաւ անոր թաղման տեղը եւ նշխարները ու մեծ հանդէսով փոխադրուեցաւ ու թաղուեցաւ Թորդան աւանը:

Հայաստանեայց եկեղեցին ներկայիս երեք անգամ կը կատարէ Սուրբին յիշատակը.

- 1.- Զարչարանաց եւ Մուսնի վերայ անունով՝ Մեծ Պահոց Զ. Կիրակիի նախընթաց Շաբաթ օրը:
- 2.- Ելնի վերայէն՝ Տօն Կաթողիկէ Ա. Էջմիածնի կանխող Շաբաթ օրը:
- 3.- Գիւտ Նշխարաց՝ զկնի Հոգեգալստեան Դ. Կիրակիի նախորդ Շաբաթ օրը:

Երեք տօներն ալ ունին իրենց նախընթաց շաբաթապահները: Օտար եկեղեցիներ կը տօնեն զայն Սեպտեմբեր 30-ին:

Ըստ Տօնացոյցին այս տարի Գիւտ Նշխարաց տօնը կը գուգադիպի Շաբաթ, 19 Յունիս 2021-ին:

ՓԱՌՔ ՔԵԶԻ ՏԷՐ

ՀԱՐՅՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆ ԲԱԺԻՆ

ԻՆՉՈ՞՞Ր ՀԱՄԱՐ ԱՍՏՈՒԾ ՄԱՐԴՈՒՆ ՀԱՆԴԵՊ ԱՆՅՈՒՆ ՍԵՐ ԵՒ ԽՆԱՍԵ ՏԱՐԱԾԵԼՈՎ ՀԱՆԴԵՐՁ՝ ԶԱՅՆ ՊԱՏԺԵՑ, ԴՈՒՐՍ ՀԱՆԵՑ ԴՐԱՆՏԵՆ ԵՒ ՄԱՅՈՒՆ ՂԱՏԱՊԱՐՏԵՑ ԱՆՈՐ ՀՈՂԵՂԵՆ ՄԱՐՄԻՆԸ:

Աստուած հայրական սիրով պատժեց Ադամն ու Եւան՝ զանոնք ապաշխարութեան հրաւիրելու եւ ապա թողութիւն շնորհելու համար: Աստուած զանոնք դրախտէն դուրս հանեց, որպէսզի անոնք կենաց ծառէն ուտելով չանմահացնէին իրենց ապականեալ մարմինը եւ սատակայի նման առ յաւետ մեղաւոր վիճակի մէջ մնալով չդատապարտուէին յաւիտենական տանջանքի:

Մարդը իր ապականեալ մարմինով այլեւս չէր կրնար իր Արարիչին Սրբութեան առջեւ ներկայանալ: Ուստի Աստուած մարդուն հոգին յաւիտենական տանջանքէ ազատելու համար անոր հողեղէն ապականեալ մարմինը մահուան դատապարտեց, որպէսզի զայն վերստին նորոգէր իր միածին Որդւոյն կատարելիք փրկագործութեան խորհուրդով եւ ապա իր առջեւ կեցնէր սուրբ եւ անարատ վիճակով:

ԱՂՕԹՔ

Տէ՛ր, ընդուն՛ մտնայնախօս աղօթքներս, որ դատապարտուած կանգնած եմ Քու առջեւ՝ զգաստութենէն ծուլացած, մտքի լոյսէն խտտորած ու երկիւղէն ունայնացած: **Եփրեմ Ասորի**

Հ Ո Գ Ե Ի Ո Ր Պ Ա Տ Գ Ա Մ

ՊԻՏԻ ԶՎԻՐԱՎՈՐԷ ՔԵԶ, ԱՅ՝ ՈՐ ՎԻՐԱՎՈՐՈՒՅՆԱՎ ՔԵԶԻ ՀԱՄԱՐ

Յիսուս ինք, որ արգիլեց մարդոց դատապարտելու մեղաւոր կինը՝ բռնաւ պիտի չդատապարտէ մեզ: Ինք, որ մեռաւ մեզի համար՝ երբեք չ՛ուզէր մեռնել մեզ: Ինք, որ մեր մեղքերուն համար վիրաւորուեցաւ՝ պիտի չվիրաւորէ մեզ: Ինք, որ մեր անօրէնութիւններուն համար ծեծուեցաւ՝ չ՛ուզէր ծեծել մեզ (Եւ 53.5): Ինք, որ ճգմեց Սատանային գլուխը՝ չ՛ուրախանար մեր ալ գլուխը ճգմելով:

ՄԵՐ ՍՈՐՎԵԼ ԻՔ Հ Ո Գ Ե Ի Ո Ր Դ Ա Ս Ը

Միտելի բարեկամ, կը հաւատա՞ս այս բոլորին: Կը հաւատա՞ս Յիսուսի սիրոյն եւ ներող հոգիին: Կը հաւատա՞ս, որ ան մեռաւ որպէսզի իր մահովը քեզ անմահութեան զաւակ դարձնէ: Կը հաւատա՞ս, որ դուն իրեն համար երկինքէն աւելի գեղեցիկ ու ցանկալի ես: Կը հաւատա՞ս, որ ան զօրեղապէս կը փափաքի տեղ ունենալ սիրտիդ մէջ եւ տեղ տալ քեզի իր սրտին մէջ: Կը հաւատա՞ս, որ անոր ամենակալ ձեռքը պաշտպանութեանդ համար է եւ ոչ թէ կործանումիդ համար: Եթէ կը հաւատաս այս բոլորին՝ ի՞նչպէս կ՛արտայայտես հաւատքդ Յիսուսի հանդէպ:

ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ Կ՛ՈՒՉԵՍ...

ԵԹԷ Կ՛ՈՒՉԵՍ ԳԻՏԱԿ ԹԷ Ո՞Վ Է ԱՍՏՈՒԾՈՅ ԸՆԴՈՒՄՆԵՆԻ ՄԱՐԴՔ ԿԱՐԿ՝ ՍԱՂՄՈՍ 24

Տիրոջն է երկիրը՝ իր ամբողջ լիութեամբ, աշխարհը՝ իր բնակիչներով: Որովհետեւ ի՛նք անոր հիմերը դրաւ ծովերուն վրայ, ովկիանտներուն վրայ հաստատեց զայն: Ո՞վ արժանի է Տիրոջ լեռը ելլելու: Ո՞վ կրնայ անոր սուրբ տաճարին մէջ կանգնիլ: Ան, որ մաքուր է իր գործերով ու մտածումներով: Ան, որ ստութեան անձնատուր չեղաւ, եւ նենգութեամբ երդում չըրաւ: Այնպիսին Տիրոջմէ օրհնութիւն պիտի ստանայ, արդարութիւն պիտի գտնէ զինք փրկող Աստուծմէն: Այսպէ՛ս կ՛ըլլայ աստուածապաշտը, որ կ՛ուզէ քու ներկայութեանդ գայ, ո՞վ դուն՝ Աստուածը մեր հայրերուն: Բացէ՛ք ձեր փեղկերը, ո՞վ դարպասներ, թող բացուի՛ն յաւիտենութեան դռները, որպէսզի ներս մտնէ փառաւոր Թագաւորը: - Ո՞վ է այս փառաւոր Թագաւորը: - Տէ՛րն է, հօր եւ անպարտելի, Տէ՛րը, պատերազմի մէջ անխորտակելի: Բացէ՛ք ձեր փեղկերը, ո՞վ դարպասներ, թող բացուի՛ն յաւիտենութեան դռները, որպէսզի ներս մտնէ փառաւոր Թագաւորը: - Ո՞վ է այս փառաւոր Թագաւորը: - Ամենակալ Տէ՛րը, ի՛նքն է փառաւոր Թագաւորը:

Նեղութեան թէ ուրախութեան պահուն կարդանք Սաղմոսագիրքէն